

**«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊՈԱԿ-ի  
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
( փոփոխություններով և լրացումներով)**

Ընդունվել է ուսումնարանի

01.09.2012 թվականի մանկավարժական խորհրդի թիվ 32 նիստի որոշմամբ,  
հաստատվել է ուսումնարանի կառավարման խորհրդի 01.09.2012 թվականի թիվ 21 նիստում  
նախագահ՝ Ա. Եսայան  
և 01.10.2012թ. թիվ 155 հրամանով  
տնօրեն՝ Ք. Ահարոնյան

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ**

- 1.1 «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ուսումնարան) ուսանողների ներքին կարգապահական կանոնակարգը (այսուհետ՝ կանոնակարգ) ընդունվում և նրանում փոփոխություններ կատարվում են տնօրենի կողմից՝ մանկավարժական խորհրդի համաձայնությամբ:
- 1.2 Կանոնակարգը երաշխավորվում է Հայաստանի Հանրապետության Մահմանադրությամբ, ուսումնարանի կանոնադրությամբ, օրենքներով սահմանված իրավունքների ու պարտականությունների կատարումը կանանակարգում է կարգապահության, հանգստի, կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին դրույթները:
- 1.3 Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են ուսումնարանի բոլոր ուսանողների վրա:
- 1.4 Սույն կանոնակարգով սահմանվում են ուսումնարանի ուսանողների ներքին կարգապահական կանոնները:

**2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ**

- 2.1 Ուսումնարանի և ուսանողի միջև հարաբերությունները կարգավորվում են օրենսդրության համաձայն կնքված պայմանագրով:
- 2.1 Ուսանողներին տրվում է պետական կրթաթոշակ: Պետական կրթաթոշակի տրման կարգը և չափը սահմանում է ՀՀ Կառավարությունը:
- 2.3 Ուսանողը կուրսից կուրս տեղափոխվում է ուսումնական ծրագիրն ամբողջովին կատարելուց հետո՝ տնօրենի համապատասխան հրամանի հիման վրա:
- 2.4 Ուսումնարանի դասախոսները ուսանողների նկատմամբ դրսևորում են օբյեկտիվ, հարգալից, ուշադիր և բարեկիրթ մանկավարժական վերաբերմունք:
- 2.5 Ուսանողները դասախոսների և այլ աշխատողների նկատմամբ ցուցաբերում են հարգալից վերաբերմունք, ճշտապահություն ու հանդուրժողականություն, ինչպես նաև քաղաքավարի վարքագիծ:
- Այս կանոնների խախտումը դիտվում է որպես կարգապահական կանոնների կոպիտ խախտում:
- 2.6 Ուսումնարանում և հատկապես լսարանների մոտ արգելվում է աղմկել, բարձր խոսել, դասերի ժամանակ անհարկի անցուղարձ անել, բացել լսարանների դռները:

2.7 Դասերի ժամանակ դասախոսների և ուսանողների բջջային հեռախոսները պետք է անջատվեն: Խիստ արգելվում է դասերի ժամանակ բջջային հեռախոսով խոսել կամ այլ կերպ օգտագործել, ինչպես նաև այն դնել լսարանի տեսանելի վայրում:

2.8 Քննական միջոցառումների ժամանակ արգելվում է օգտվել բջջային հեռախոսից կամ արտաքին կապ ապահովող տեխնիկական այլ միջոցներից:

2.9 Ուսանողները դասերին պետք է ներկայանան սահմանված ժամանակին: Ուշացման դեպքում ուսանողը մատչանում պետք է ստանա «բացակա»:

2.10 Դասերի ժամանակ լսարանից դուրս գալ ուսանողը կարող է միայն դասախոսի թույլտվությամբ:

2.11 Ուսանողի բացակայությունները համարվում են հարգելի, եթե ներկայացվում են համապատասխան փաստաթղթեր:

2.12 Ուսումնարանի անունից տարբեր միջոցառումներում հանդես գալու դեպքում սովորողները՝ ցուցաբերում են պատշաճ վարքագիծ՝ բարձր պահելով ուսումնարանի վարկանիշը:

2.13 Ուսանողները դասերին հաճախում են պատշաճ հագուստներով:

2.14 Ուսումնարանի ուսանողները պարտավոր են բարեխիղճ օգտագործել և պահպանել ուսումնարանի գույքը, սարքավորումները և այլ ունեցվածքը՝ իրենց բոլոր պատկանելիքներով, հատուցել իրենց մեղքով պատճառված վնասները:

2.15 Ուսումնարանի գրադարանից ստացած դասագրքերը օգտագործել խնամքով և տարեվերջին լավ վիճակում վերադարձնել:

2.16 Մշտապես խնամել, ջրել, պահպանել ուսումնարանի բակի կանաչ տարածությունը:

2.17 Ակտիվորեն մասնակցել ուսումնարանի ուսանողական խորհրդի աշխատանքներին, համաուսումնարանական և համայնքային միջոցառումներին:

2.18 Ուսումնարանը՝ օրենսդրության և սույն կանոնակարգի համաձայն, իրականացնում է ուսումնարանի պահպանությունը և ուսանողների անվտանգությունը:

Ուսումնարանի անվտանգությունն իր գործառույթներում ներառում է.

2.18.1 շենքի, դրան հարող բակի և տարածքի, ամբողջ գույքի ապահովման կազմակերպումը,

2.18.2 ուսանողների անվտանգության ապահովումը:

2.19 Ուսումնարանի ուսանողները պարտավոր են՝

ծանոթանալ և ենթարկվել ուսումնարանի ներքին կարգապահական, անվտանգության, սանիտարական, և հակահրդեհային կանոններին:

2.20 Ուսումնարանի տարածքում արգելվում է ծխել:

2.21 Օրենսդրությամբ, ուսումնարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պարտականությունները չկատարելու կամ խախտելու դեպքերում ուսանողի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական պատասխանատվության միջոցներ՝ նկատողություն, խիստ նկատողություն ընդհուպ ուսումնարանից հեռացնելը: